ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 փետրվարի 2024թ. թիվ 59-Ա

ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄԸ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի հունվարի 31-ի թիվ 56-Ա որոշումը և հաշվի առնելով Ա.Գրիգորյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Խ.Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը, մինչև մրցույթի արդյունքում տնօրենի ընտրությունը, դնել «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Խ.Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Ալվարդ Գառնիկի Գրիգորյանի վրա:

2. «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Խ.Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Խ.Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի լիազորությունների իրականացման համար Ա.Գրիգորյանին տալ լրավճար «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Խ.Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի փետրվարի 5-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

05/02/2024

X

ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. փետրվարի 5
ք.Վանաձոր